Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ՝ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շնորհավորական նամակ է հղել Արկադի Ղուկասյանին՝ ԼՂՀ Հանրապետության Նախագահի պաշտոնում վերընտրվելու առիթով: Նամակում ի մասնավորի ասվում է.

«ԼՂՀ Հանրապետության Նախագահի ընտրությամբ Արցախի հերոսական ժողովուրդը վերստին հաստատեց ազատ ապրելու իր կամքը և իր պատրաստակամությունը՝ ընթանալու Արցախի պետականության զորացման, երկրի կայունության ամրապնդման և բարգավաճման ճանապարհով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսո խորանից աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Իր հանապազ օրհնության ներքո խաղաղ ու ապահով պահպանի հայոց Արցախ աշխարհը և աջակից ու առաջնորդ լինի Ձեզ Նախագահի բարձր ու պատասխանատու պաշտոնում՝ հանուն հավատավոր մեր ժողովրդի հայրենաշինական իղձերի իրականացման:

Թող Տերը պարգևի Ձեզ քաջառողջություն, ուժ, կորով ու եռանդ»:

12 օգոստոսի 2002 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ